

ՀԵՂԻՆԵ ՄԵԼՔՈՆՅԱՆ

Բանասիրական գիտ. թեկնածու, դոցենտ

ԳԾԻԿԱՎՈՐ ԻԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ Ե. ՉԱՐԵՆՑԻ ՉԱՓԱԾՈՅՈՒՄ

Որդի արեւելահայերենի չափանիշներով՝ գծիկով հարադրությունները համազոր կապակցություններ են, մինչդեռ նախորդ շրջանների եւ արդի գրականության տարբեր հեղինակների գործերում կարող են հանդիպել գծիկով հարադրված լրացում-լրացյալ կապակցություններ՝ անշատ գրության փոխարեն, ինչը կարող է պայմանավորված լինել տվյալ ժամանակի չափանիշներով կամ հեղինակային նախասիրությամբ: Գծիկով հարադրությունների ստեղծումն ընդհանուր նախասիրություն է հայ գրողների գործերում: Դրանցով երկու առանձին հասկացություններ ի մի են բերվում՝ ստեղծելով բաղադրյալ բառ-պատկեր: Ե. Չարենցի չափածոն այդ հարցում բացառություն չէ. այստեղ էլ նկատվում է հեղինակային գծիկավոր հարադրությունների առատություն (ընդհանուր՝ 89), ինչի ուսումնասիրությանն էլ նվիրված է սույն հոդվածը¹: Օրինակների կեսից ավելին գոյականներ են (48), փոքր թիվ չեն կազմում նաեւ ածականները (26), երրորդ տեղում մակբայներն են (12), բայերն ընդամենը 2-ն են: Կա նաեւ մեկ ձայնարկություն:

1. Գոյական

Գոյականները, ինչպես նշվեց, ընտրանքում մեծամասնություն են կազմում (54%): Դրանց շարքում նկատվում են անձնանիշներ, մարդկանց առնչվող բառեր (կազմաբանություն, ժպիտ, հոգի), աշխարհագրական անուններ, կազմություններ՝ առնչակից, հոմանիշ կամ կրկնավոր բաղադրիչներով:

1.1. Անձնանիշները գոյականների մեծ մասն են կազմել (17 կազմություն՝ 35,4%): Դրանք են՝ 1) ախպեր-սալդաթ (2/119)², 2) արֆա-առլեկին

¹ Լեզվանյութը՝ ԵՂԻՆԵ ՉԱՐԵՆՑ, Երկերի ժողովածու 4 հատորով, հտ. 1—3, Երեւան, 1986, 1986, 1987:

² Կոտորակի գծից ձախ հատորի համարն է, աջ՝ էջը:

(2/296), 3) գրաստ-ապի (2/168), 4) երագ-կին (1/27), 5) ընկեր-բարեկամ (3/91), 6) Կարդաշ-Ալի (2/147), 7) «Հետերա-երագ» (վերնագիր) (1/34, 1/35), 8) հետերա-ցնորք, հետերա-երագ (1/35), 9) մոգ-վարսավիր (1/184), 10) նեո-արքաներ (3/29), 11) նեո-մարդ (3/25), 12) ունետու-տեր (2/186), 13) պրոկետ-Համբո (2/111), 14) ռանչպար-տղամարդ (2/186), 15) ֆյասիր-աշխատավոր (2/118), 16) փուր-աղջիկ (1/79), 17) Լեմին-քեռի (2/132):

Ինչպես երեւում է, ողջ շարքը, բացառությամբ 2 օրինակի (5, 12), լրացական բաղադրիչներով է՝ որոշիչ-որոշյալ կապակցություն:

Ինչ վերաբերում է «արքա-առլեկին»-ին, ապա ականարկն ուղղված է Նիկոլայ Ա.-ին: Առաջին հայացքից «արքա-առլեկին»-ը թվում է հեղինակային պատկեր, որը, սակայն, իրականում պետք է կապակցել գերմաներեն համանուն դրամայի վերնագրի հետ (հեղինակ՝ ավստրիացի Ռուդոլֆ Լոտար), դրամա, որ գրվել է 1900 թ. եւ ռուսերեն թարգմանությամբ առաջին անգամ Պետերբուրգում բեմադրվել Ալեքսեյ Թաիրովի կողմից 1917 թ. նոյեմբերին Կամերային թատրոնում³: Դրամայի իրադարձությունները նրա ժամանակ շատ համահունչ են եղել Ռուսաստանում տիրող գահակալական խնդիրներին՝ անմիջապես հաջորդած Հոկտեմբերյան հեղափոխությանը: Գծիկավոր գրությունը ռուսերենի ազդեցությունն է՝ «Король-Арлекин», մինչդեռ գերմաներեն բնագրում անշատ գրություն է՝ “König Harlekin”: Դրամայի գլխավոր կերպարը ինքնակոչ առլեկինն է, որ ինքն իրեն իբրեւ արքա է ներկայացրել: Ե. Չարենցը, Նիկոլայ Ա.-ի անունը չնշելով, ստեղծում է «մի պորփյուրակիր արքա-առլեկին» շրջաստվածը եւ ներկայացնում նրան իբրեւ վախը զսպած, քաղաքավարի պահվածքով կապուտաչյա մեկի («Ձմեռային պալատի ներքնահարկում» 2/296), ով սառնասրտորեն տվել է գեկաբրիստների պատժի հրահանգը: Այսպիսով՝ «արքա-առլեկին»-ը ոչ թե հեղինակային, այլ, եթե կարելի է այդպես անվանել, «փոխառյալ-թարգմանական նորաբանություն» է:

«Գրաստ-ապի»-ն հեղինակային բառ-պատկեր է՝ կիրառված «էլեգիա, գրված Վենետիկում» պոեմում՝ չարքաշ հողագործին պատկերելու համար:

«Կարդաշ-Ալի» կազմությունը կիրառված է տողասկզբում, ինչն առկա է թողնում առաջին բաղադրիչի մեծատառ լինել-չլինելը: Ալին «Լե-նինն ու Ալին» պոեմի գլխավոր կերպարն է, իսկ «կարդաշ» բաղադրիչը՝

³ Տե՛ս <https://www.ticketland.ru/teatry/teatr-romana-viktyuka/spektakl-korol-arlekin/>:

օտարաբանություն՝ «եղբայր» բառի թուրքերեն (kardeş) համարժեքը: Այս բաղադրությունը կարող է զուգահեռվել «ախպեր-սալդաթ»-ին:

«Նեո» բաղադրիչով ընտրանքում հանդիպել է 2 կազմություն՝ «նեո-արֆաներ», «նեո-մարդ», երկուսն էլ՝ «Սասունցի Դավիթը» պոեմում, բայց հետաքրքիր է, որ կազմություններից մեկը վերաբերում է արտաքին թշնամուն (նեո-մարդ = Մսրա Մելիք), մյուսը՝ ներքին (նեո-արքաներ = Օհանի զարմից սերած տերեր):

Ինչ վերաբերում է «պրոլետ-Համբո» կազմությանը, ապա «պրոլետ» բաղադրիչը սովորաբար կիրառվում է հապավումներում, եւ իբրեւ հապավույթ՝ այն գրվում է կից, բայց այս պարագայում, երբ ունենք կերպարի տիպականացմանը ծառայող հեղինակային բառ-պատկեր (= պրոլետար Համբո), թերեւս կցագրությանը խանգարող հանգամանք է դարձել երկրորդ բաղադրիչի հատկանուն-անձնանուն լինելը:

1.2. Ընտրանքում մի քանի գոյական ուղիղ կամ փոխաբերական իմաստով առնչվում են մարդկանց (հատկապես կանանց)՝ նրանց կազմաբանություններին, հոգուն, ժպիտին: Այսպես՝ 1) ալ-կրակ («երկու+...») (2/31), 2) արեւ-արքա (1/58), 3) զանգ-աչքեր (1/52), 4) էլեկտրա-հոգի (2/20), 5) ժպիտ-նսկի (Արեւի) (1/56), 6) հուր-ժպիտ (1/58), 7) հուր-հրաշքներ (լուսե) (2/36), 8) հուր-նժույզ (2/36), 9) շեփո-մարմին (1/288):

«Ալ-կրակ», «հուր-հրաշքներ», «հուր-նժույզ» կազմությունները «Ասպետական» պոեմից են՝ հեղինակային բառ-պատկերներ՝ 93 տարեկան Ալֆոնս Անդոյի զույգ կենակցուհիներին բնութագրող: Վերջինը, ի դեպ, պոեմի նախորդող հատվածում (2/25) կիրառված է անջատագիր տարբերակով:

«Արեւ-արֆա», «ժպիտ-նսկի», «հուր-ժպիտ» կազմությունները կիրառված են «Ծիածան» ժողովածուի «Ոսկին» բաժնում. դրանք հեղինակային խորհրդանիշներ են:

«Զանգ-աչքեր» հարադրությունը եւս «Ծիածան» ժողովածուից է, այս դեպքում՝ «Կապույտը» բաժնից: Զանգերը կույսի երկնագույն աչքերի խորհրդանիշն են, ղողանջները՝ արցունքների:

«Էլեկտրա-հոգին» վերագրվում է գյուլմրեցի պոետ Արտաշես Տեր-Մարտիրոսյանին՝ «Պոեզոգուռնա» գրքի «Շոգեգալուստ» պոեմում. «Եւ մա էլեկտրա-հոգին / Պիտի տոթ զնգա ու թոչի»:

Հեղինակային բառ-պատկերներից է նաեւ «շեփո-մարմին»-ը: Այն կիրառված է «Աստղիկ» պոեմում՝ որպես քնարական հերոսի

անանձնական կանչն առ Աստղիկը՝ սիրած էակի խորհրդանիշից գալիքը ծնող խորհրդանիշի վերածված:

Ամփոփելով հոգվածի սույն մասը՝ նշենք նաեւ, որ շարենցյան չափածոյում տեղ են գտել նաեւ անձնանունների հեղինակային տարբերակներ, որոնք ընդունված անջատագիրների կցական կամ գծիկով ուղղագրական տարբերակներն են: Դրանք են՝ Թեյմուրլենկ (3/107), Մարամելիֆ (3/13), Զինգիզխան (3/107), Աոյուծ-Մհեր (3/9), Ջենով-Օհան (3/14):

1.3. Աշխարհագրական անունների վեց օրինակ ենք գտել՝ պայմանականորեն դրանց շարքը դասելով նաեւ «խատա-տուն»-ը: Դրանք են՝ 1) արեւ-Նաիրի (1/421), 2) երազ-ճամփա (1/233), 3) խատա-տուն (1/375), 4) Հայաստան-յար (1/228), 5) հեֆիաթ-առու (2/168), 6) մայր-քաղաք (3/295):

Բոլոր օրինակները, ըստ ներքին շարահյուսության, որոշիչ-որոշյալներ են: Դրանցից համազոր կառույց կարող էր դիտվել միայն «խատա-տուն»-ը, այն էլ որոշիչ-որոշյալ է դառնում շեշտի միջոցով:

1.4. Կան նաեւ առնչակից բաղադրիչներով կազմություններ: Այսպես՝ 1) զուռնա-մաղարա (2/13), 2) թուր-տեզ (3/25), 3) հուր-արյունի (վայրկյան) (2/33), 4) պատերազմի-բանի (մասին) (2/125), 5) սուր-կայծակ (3/18):

Ինչ վերաբերում է զուռնա-մաղարա կազմությանը՝ կիրառված «Պոեզոգուռնա»-ում, ապա նույն գրքում հանդիպում է նաեւ անջատագիր կիրառություն, բնականաբար՝ որպես 2 առանձին բառ:

1.5. Հոմանիշ բաղադրիչներով արձանագրել ենք հետեւյալ կազմությունները՝ 1) Թմբուկ-դեղ (2/107), 2) ձի-նծույզ (3/23), 3) մեզ-մառախուղ (1/298), 4) շաշ-շառաշ (3/71): Նկատելի է, որ այս շարքի բոլոր միավորների բաղադրիչների միջեւ հարաբերությունը համազոր է:

1.6. Գոյականների շարքում կան մի խումբ օրինակներ էլ, որ չունեն իմաստային ընդհանրություն, բայց ընդհանուր են իրենց ներքին շարահյուսությամբ՝ լրացում-լրացյալ հարաբերությամբ՝ բացառությամբ 2-րդի: Դրանք են՝ 1) ագիտ-պոեմ (1/374), 2) բար-մայրնեզ (2/111), 3) կես-գիշեր (1/312), 4) ձյուն-թաշկինակ (1/324), 5) ուղիո-գրի (կայաններ) (1/371), 6) ուղիո-կայան (1/367), 7) ցնորֆ-բարդի (3/118):

Այս շարքում առեղծվածային է «բար-մայրնեզ» կազմությունը՝ կիրառված 1924 թ. հեղինակված «Ստամբոլ» պոեմում եւ հանգավորված «քեզ» բառաձևի հետ: «Ստամբոլ: / Դու պարում ես ջազբանդ: / Դու

ուսումնաբերության փոփոխությունները: / Նետում եմ ես ահա, հուզված, / Իմ ֆնֆուշ կոմպլիմենտը քեզ: — / Ինչքան էլ մի պրոլետ-Համբո / Այս խոսքիս նախատիմն իսկուհի — / Մի անունն դու ունես, Ստամբոլ. — / Միջազգային պոռնիկ» (2/111):

Չունենալով անհրաժեշտ հիմքեր՝ այստեղ գերծ ենք մնում մեկնաբանություններից՝ «բար-մայոնեզի» ստուգաբանությունը թողնելով առկախ:

Անդրադառնալով «Կես-գիշեր» բառին՝ նշենք, որ հեղինակը գծիկով է գրել նաև դրանից սերված «Կես-գիշերային» ածականը, կազմություններ, որոնց գրությունն գործող չափանիշը կցագիրն է: Ե. Չարենցին նախորդած շրջանում էլ հանդիպում է անջատ գրություն (տե՛ս Ա. ՄԱՏՈՒՐՅԱՆ, «Կես գիշեր», 1890):

Ինչ վերաբերում է «ցնորք-բարդի» կազմությանը, ապա «ցնորք» բաղադրիչով գծիկավոր կազմությունները հայ բանաստեղծական ավանդույթում նորույթ չեն. հիշենք, օրինակ, Վ. Տերյանի կերտած «ցնորք-աղջիկ»-ը (նմանատիպ՝ «հրաշք-աղջիկ»): Հետաքրքիր է, որ ստեղծագործության հենց այդ հատվածը նվիրված է Վ. Տերյանին, ինչը եւս վկայում է բառակազմական ազդեցության մասին:

Իսկ «ծյուն-թաշկինակ» կազմությունը կիրառված է ոչ թե «ծյունը՝ որպես թաշկինակ» իմաստով, այլ՝ «թաշկինակը որպես ծյուն՝ սառը, ճերմակ»:

2. Ածական

Ինչպես նշեցինք, ածականների քանակը մեր ընտրանքում երկրորդն է՝ 29,2%: Իբրեւ համեմատություն կարելի է նշել, որ եթե գոյականական կազմությունների ներքին շարահյուսությունը գերազանցապես լրացական է՝ որոշիչ-որոշյալ, ապա ածականական կազմություններում գերակշռում է համագործությունը:

2.1. Հոմանիշ/ նույնարմատ բաղադրիչներով օրինակները սրանք են՝ 1) անմիտ-աննար (1/223), 2) անհողդողդ-վեհ (չուգունե Մարդը) (2/297, 298), 3) հուր-հրածին (կույսերը) (2/29), հուր-հրածին (սիրով) (2/35), 4) հուր-հրեղեն (աղջիկներ) (2/24), 5) մեղմ-վհատ (1/13), 6) մութ-մշուշե (ամպ) (2/26), 7) ցիր-ցան (խմբեր) (1/330):

Ինչ վերաբերում է «ցիր-ցան»-ին՝ կիրառված «Ազգային երազ» պոեմում, ապա այն համագործածական «ցիրուցան» բառի տարբերակն է, եւ

իրերեւ այդպիսին՝ Ե. Չարենցի չափածոյում կա եւս մեկը՝ «ցիրցան»-ը՝ կիրառված «Դանթեական առասպել» պոեմում (1/300): Առաջինը «արթնացան» բառի հանգազույզն է, վերջինը՝ «հրացան» բառի: Երկու դեպքում էլ կրճատ ձեւերը կառավարվել են տաղաչափական պահանջով՝ կիսատողի 5-ավանկութունն ապահովելու համար:

2.2. Կրկնավոր բաղադրիչներով 3 օրինակ ենք արձանագրել՝ 1) կարմիր-կաս (այտերդ) (1/216), 2) կարմիր-կարմիր (ուղեղս) (1/411), 3) ցուրտ-ցուրտ (արցունք) (3/428):

«Տաղարան» շարքում գոգալի այտերի համար կիրառված «կարմիր-կաս» որոշիչը դրափոխված բառատարբերակ է, ինչի պատճառը գազելի երկրորդ տողերի նույնահանգութունն է՝ ալմաս էին – խաս էին – կարմիր-կաս էին – անմաս էին: Ու թեեւ գունանունները հայերենում դիտվում են համեմատության աստիճանից զուրկ որակական ածականներ, բայց կրկնավորները շատ հանգիստ կարելի է դիտել գերադրական աստիճանի իմաստի արտահայտման այլընտրանք՝ իրացված բառակազմական միջոցներով:

2.3. Գունանուն բաղադրիչով հեղինակային կազմութունները 6-ն են՝ 1) ալ-կրակ (մարմիններ) (2/22, 37), 2) ամայի-սեւ (ափեր) (2/297), 3) բաց-կապույտ (թերթիկ) (3/43), 4) բաց-կարմիր (թանաք) (2/206), 5) չոր-հողագույն (մարմինը ծերունու) (2/31), 6) սեւ-լրբենի (ճիվաղ) (2/31):

Սրանցից «բաց-կապույտ»-ը եւ «բաց-կարմիր»-ը արդի նորմով հաստատված անջատագիր կապակցութունների (2 բառ) ուղղագրական տարբերակներն են (1 բառ): Ի տարբերություն այս 2 օրինակի՝ «սեւ» եւ «հողագույն» բաղադրիչներով կազմութունները ներքին շարահյուսությամբ համագոր են:

2.4. Մնացած ածականները ներկայացնենք առանց դասակարգման՝ 1) դարավոր-վեհ (բարձունք) (2/299), 2) ետ-մահու (թատերգություն) (3/119) // ետմահու (թատերգություն) (3/160), 3) խոլ-օձածեւ (գալարք) (2/33), 4) կեղծ-դասական (գրող) (3/138), 5) կեւ-գիշերային (ժամ) (2/345), 6) հարբեցող-հիմար (Չարենց) (1/223), 7) հուր-գեղամի (կույսեր) (2/27, 2/30), 8) հուր-թեթեւ (ոտքերով) (2/34), 9) հուր-խելագար (կարոտ) (2/30), 10) ցնդած-գինեմոլ (Չարենց) (1/223):

Բերված օրինակներից «հարբեցող-հիմար»-ը եւ «ցնդած-գինեմոլ»-ը, որ նույնիմաստ բաղադրիչների դրափոխված տարբերակներ են, կիրառված են «Տաղարան» շարքի նույն տաղի նույն տողում. «Եւ սրտի

ցավից հուսահատ ես մե թաս օղի խմեցի — / Չարենցը ցնդած-գինեմոլ, հարբեցող-հիմար է, ասին»։ Սրանից ստեղծվում է տպավորություն, որ նույն գաղափարը տարբեր մարդիկ տարբեր ձևակերպումներով են արտահայտել, ինչն էլ լեզվի՝ որպես ստեղծագործական երեւույթի դրսևորումներից է։

Բերված շարքից 4—5-րդը լրացական հարաբերությամբ են, 2-րդը՝ կցագիր բառի հարադրական-գծիկավոր տարբերակ, իսկ մնացածը՝ համազոր հարաբերությամբ կազմություններ, որոնցով երեւույթը բնութագրվում է երկու կողմից։ Երկրորդը, ի դեպ, հանդիպում է դրամատիկ գործի (ինտերմեդիա «Աքիլլես, թե՛ Պյերո») ռեմարկային տարածքներում, եւ հետաքրքիր է, որ մուտքի հատվածում՝ գծիկավոր, ավարտի հատվածում՝ կցագիր գրությամբ։

3. Բայ

Բայական գծիկավոր հարադրությունները մեր ընտրանքում շատ չեն՝ 2 օրինակ։ Դրանք են՝ 1) ազատ-վշտունե (2/40), 2) խփեց-շողշողաց (3/25)։

Առաջինը «Ռոմանս անսեր» ստեղծագործությունից է՝ Ազատ Վշտունուն ուղղված հատվածից՝ իբրեւ հեզնական բառախաղ (թող Ազատն ազատ-վշտունե!), ինչը սաստկացվում է «վշտունեղ» բառի հետ հանգավորմամբ։ Այս եւ ստեղծագործության մյուս հատվածներում հեզնանքի արտահայտմանն է ծառայում նաեւ հայերենում հազվադեպ կիրառություն ունեցող ծաղր կետադրանշանը (!)։ Ակնհայտ է, իհարկե, որ այստեղ նոր բայի հիմքը (ազատ-վշտունե) Ազատ Վշտունու գրական մականունն է։

Իսկ «խփեց-շողշողաց»-ը հանդիպում է «Սասունցի Դավիթը» պոեմում եւ վերագրվում է Թուր Կեծակիին։

4. Մակբայ

Մակբայների ընդհանուր թիվը ընտրանքում 12-ն է, ինչը կազմում է 13,5%։

4.1. Ձեւի մակբայներ. ինչպես եւ սպասելի էր, սրանք գերակշռում են մակբայների շարքում (50%)։ Օրինակներն են՝ 1) երազունորում (լսում եմ) (1/51), 2) թափ-թափ (զարկում է թմբուկը) (2/107), 3)

հետ-հավասար (կռիվ տալ) (2/118), 4) հորդու-հորդու (քշել) (2/161), 5) հուր-հրահուր (հոսում էր գինին) (2/26), 6) հրթիռ-հրթիռ (վեր են թռչում) (1/350):

«Երազուն-տրտում»-ը կիրառված է «Ծիածան» ժողովածուի «Կապույտը» շարքի երրորդ տաղում, որում քնարական հերոսը, հարազատ մնալով կապույտի խորհրդին, քնած աղջկա հոգուն մերձենում է միայն լսելիքով. «Ու լսում եմ ես, լսում եմ միայն, / Երազուն-տրտում»:

Ձեւի մակբայներից ընդգծված հեղինակային կազմություններ են «թափ-թափ»-ը, «հետ-հավասար»-ը, «հորդու-հորդու»-ն եւ «հրթիռ-հրթիռ»-ը:

Դրանցից «թափ-թափ»-ը բնաձայնական հիմք ունի, ըստ բառարանի՝ նույնն է՝ «թակ-թակ»⁴: Այն թմբուկից արձակված ձայնն է, այլ ոչ թե «կենտ-կենտ»-ի կամ «մեկ-մեկ»-ի համարժեքը: Ու թեւ բառարանային նշագրմամբ՝ մակբայ է (ի դեպ՝ հենց շարենցյան այս օրինակով), բայց առանձին կիրառությամբ կարող է դիտվել նաեւ բնաձայնական ձայնարկություն (հմմտ.՝ «Ձարկում է թմբուկը թափ-թափ» — «Լսվում էր անձրեւի ձայնը՝ թափ-թափ»):

«Հետ-հավասար»-ը կիրառվել է «Մաճկալ Սաքոյի պատմությունը» պոեմում՝ մի հատվածում, որտեղ Սաքոն դժգոհում է այն բանից, որ կովի են ուղարկվում միայն «քյասիբ-աշխատավորները». «Ու թե ընչի» էդֆան հանգին, / էդֆան տուղ տղեք հազար / Ընենց չելավ՝ ֆոռնթ գային, / Կռիվ տային հետ-հավասար»: Եւ ինչպես երեւում է, «հետ-հավասար»-ին նախորդող հանգազույզը «տղեք հազար»-ն է: «Հետ-հավասար» կազմությամբ հեղինակն ի մի է բերել 2 առնչակից հասկացություն՝ «միասին» եւ «հավասար»:

«Հորդու-հորդու» կազմությունը, որ կիրառված է «Կոմունարների Պատը Փարիզում» պոեմում, նշանակում է «անկազմակերպ խմբերով»: «Հորդու» գոյականը հեղինակային չէ. այն «ոհմակ»-ի եւ «հորդա»-ի նույնանիշն է⁵: Նորակազմ է մակբայը՝ որպես եղած բաղադրիչների կրկնությամբ կազմված բարդություն:

Գտնված կազմություն է հատկապես «հրթիռ-հրթիռ»-ը՝ կիրառված «Սոմա» պոեմում՝ մի հատվածում, որտեղ ներկայացված է զարթոնք ապրող քաղաքացու կրակուն ոգեւորությունը՝ համեմատված հրթիռի հետ.

⁴ Տե՛ս «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան», հտ. 2, Երեւան, 1972, էջ 164:

⁵ Տե՛ս է. ԱՂԱՅԱՆ, Արդի հայերենի բացատրական բառարան, հտ. 1, Երեւան, 1976, էջ 897:

«Հրթի՛ն-հրթի՛ն վեր են թռչում / Կյանքներ մեր կարեվեր, / Ու վառվում է աղ-
ջամուղշում / Ողջակիզվող սիրտը մեր»:

4.2. Ժամանակի մակբայները մեր ընտրանքում 3-ն են՝ 1) հավիտյան-
հար (3/24), 2) նորից-նոր (հավաքվել) (1/375), 3) սերունդե-սերունդ (3/30):

Նշվածներից «հավիտյան-հար»-ը համագործածական կապակցու-
թյան դրափոխված տարբերակն է, ինչը թելադրվել է հանգավորման պա-
հանջով. «Թախանձեց, խնդրեց վիզը ծռած, / Որ գերի գրի հավիտյան-հար
/ Երկիրը Սասմա եւ դարեդար / Թե՛ իր եւ թե ո՛ղջ Մարա համար / Գա, ոսկի
տանի, անհատնում հարկ»։ Արդյունքում, ինչպես տեսնում ենք, վերջում
ստացվել է նույնահանգ քառատող՝ թեեւ թույլ հանգով:

«Նորից-նոր»-ը բխել է հանգավորման պահանջից. կիսատողը՝ 4+3
վանկ, հանգազույցը՝ նախորդող «բյուրավոր»-ը («հազարավոր, բյուրա-
վոր» — «հավաքվեցին նորից-նոր»):

«Սերունդե-սերունդ»-ը պայմանականորեն ենք համարել հեղինակա-
յին նորակազմություն, քանի որ այն նախկին անջատագրի («սերուն-
դե սերունդ»՝ տե՛ս Վ. Տերյան) եւ ներկայիս կցագրի (հնչունափոխված՝
սերնդեսերունդ) ուղղագրական տարբերակն է:

4.3. Տեղի մակբայների 2 օրինակ ենք արձանագրել՝ 1) դեմ-հանդեպ
(3/25), 2) հեռու-հեռեւում (1/292, 1/322):

«Դեմ-հանդեպ»-ի ծագումը չենք կարող հիմնավորել համատեքստով:
Նշենք միայն, որ այն կիրառվել է եզակի՝ «Սասունցի Դավիթը» պոեմում:
Իսկ արդի հայերենի չափանիշով՝ նմանատիպ կազմություններն անջա-
տագիր են (օր.՝ դեմ դիմաց, դեմ հանդիման):

Ինչ վերաբերում է «հեռու-հեռեւում» մակբային, այն կիրառված ենք
գտել 2 անգամ տարբեր գործերում: Այսպես՝ «Ու լուռ էր այնպես: Հեռու-
հեռեւում / Մի հազարամյա վանք էր երեւում» («Կապուտաշյա հայրենիք»,
1915 թ., 1/292), «Սկզբում ոչինչ դեռ չէր երեւում. / Խավար էր միայն, մառա-
խուղ ու մութ: / Բայց հետո հանկարծ հեռու-հեռեւում / Կարմիր բռնկվեց մի
կրակ աղոտ» («Ազգային երազ», 1917—1918 թթ., 1/322):

Սրանց բաղադրող հիմքը՝ «հեռեւում»-ը եւս հեղինակային կազմու-
թյուն է, ընդ որում՝ նրա ծագումը նախորդում է բարդության ծագմանը:
«Հեռեւում»-ի անկախ դրսևորումները 3-ն են, որոնցից առաջինը՝ «Երեք
երգ տխրադալուկ աղջկան» շարքում, իսկ մյուս երկուսը՝ «Ամբոխները
խելագարված» պոեմում: Այսպես՝ «Հեռեւում — դեղին, տառտամ կրակ-
ներ, / Եւ ես մոտեցա այն կրակներին» («Անքուն գիշերին», 1913 թ., 1/18),

«Դաշտն էր դեմը՝ փռված էր նա շառագունված ու արեւուն,— / Ու հեռեւում, նամփի վրա հսկա փաղաֆն էր երեւում» («Ամբոխները խելագարված», 1918 թ., 1/355), «Շարժվում է խավարը թեմ ու հեռեւում խավարամած / Երեւում է փաղաֆն արդեն՝ մութ, անորոշ մի զանգրված» («Ամբոխները խելագարված», 1918 թ., 1/361):

Ինչպես կարելի է նկատել, թե՛ «հեռեւում»-ի եւ թե՛ «հեռու-հեռեւում»-ի կիրառությունները հանգավորվում են «երեւում» ձեւաբայի հետ՝ բացառությամբ ամենաառաջին օրինակի, որում նույնպես կա «երեւալ» բայը, պարզապես ոչ թե մակերեսային, այլ՝ խորքային կառույցում. զեղչված է՝ «Հեռեւում — դեղին, տառտամ կրակներ»:

4.4. Չափի մակրայնեռ. այս իմաստով մեկ մակբայ է ընդգրկվել մեր ընտրանք, այն էլ՝ ժամանակի նրբերանգով (մե-մե անգամ — 1/210): Այն «Տաղարան» շարքից է եւ իր վրա է կրում Սայաթ-Նովայի խոսքի՝ թիֆլիսահայ բարբառի ազդեցությունը:

Ինչպես նկատելի է, ածականներից գրեթե բոլորը եւ մակբայներն ամբողջությամբ ներքին շարահյուսությամբ համազոր կազմություններ են:

5. Թերիմաստ խոսքի մասերից ընտրանքում արձանագրել ենք եզակի օրինակ՝ կրկնավոր ձայնարկություն (եհե՛-եհե՛-եհե՛ — 3/89):

Իբրեւ ամփոփում՝ արձանագրենք, որ՝

- Գծիկով հարադրումը կարելի է համարել շարենցյան չափածոյին բնորոշ բառակազմական նախասիրություն (ընդհանուր՝ 89 կազմություն):

- Ընտրանքում մեծամասնությունը գոյականներն են՝ 48 (54%): Քանակապես երկրորդն ածականներն են՝ 26 կազմություն, երրորդը՝ մակբայները՝ 12 կազմություն: Բայը եւ թերիմաստ խոսքի մասերն այս նախասիրության դաշտում չեն. հանդիպել են 2 բայ, 1 ձայնարկություն:

- Ըստ ներքին շարահյուսության՝ գոյականները գերազանցապես լրացում-լրացյալ կապակցություններ են, մակբայները՝ բացառապես համազոր կառույցներ, ածականները՝ գերազանցապես համազոր կառույցներ:

- Նորակազմությունների շարքում քիչ չեն դրափոխված եւ ուղղագրական տարբերակները, որոնց հիմքում հիմնականում տաղաչափական պահանջն է (հանգ, անդամ՝ կիսատող):

- Ընտրանքում տեղ գտած կազմություններից շատերը հեղինակային պատկերաստեղծման արգասիք են, որոնց բաղադրիչները համազործածական բառեր են՝ բացառությամբ «հեռեւում» մակբայական հիմքի:

РЕЗЮМЕ

Сложные слова, пишущиеся через дефис, являются одним из словообразовательных предпочтений армянских авторов. В данной статье рассматриваются их проявление в поэзии Егише Чаренца.

В нашу выборку вошли 89 композиций, с такой частеречевой картиной: существительное (48), прилагательное (26), наречие (12), глагол (2), междометие (1).

Компонентами таких авторских конструкций являются общеупотребляемые слова, сочетание которых служит для выражения составных слов-образов. Следует отметить, что происхождение многих из них обусловлено требованиями стихосложения.

SUMMARY

Compound words written with a hyphen are one of the word-forming preferences of Armenian authors. This article discusses their manifestations in the poetry of Yeghishe Charents.

The sample of language material included 89 compositions. The quantitative picture of the parts of speech is as follows: noun — 48, adjective — 26, adverb — 12, verb — 2, interjection — 1.

The components of similar author's constructions are commonly used words, the combination of which serves to express compound word images. It should be noted that the derivation of many of them is conditioned by the requirements of versification.

